

ցոյցներ, կը ցոյցնեն, ցոյցի, ցոյցի, ցոյցոյց, ցոյցիք, ցոյցիք, ցոյցիք:

Հրամայականը — ցոյցոյ, ցոյցեք:

Յայն միայն արմատը ցոյցի կը փոխուի և ոչ երբէք ցոյցի. դա Հայերենի անյեղիք օրէնքն է:

Յոսցանքն բայը ներգործական է և ոչ անցողական, կը սղի և կը լինի ցոյցներ, և ոչ երբեք ցոյցոյցներ, ցոյցոյցի: Երկու վանկ և ոչ թէ երեք:

Այս սխալ ուղղագրութիւնը՝ բառը երկրնցնելու յանցանքն ալ ունի, որ անսովոր յանցանք մ'է աշխարհաբարի մէջ:

Եւ աւելորդ ց մ'ալ կը մտածանէ, որով երեք ց կ'ունենանք մէկ բառի մէջ: Շնորհիւ այդ աւելորդ ց-ին՝ ստեղծուած է Հայերենի ամենէն սղեղ Հնչումներէն մին, ցոյց, ցոյցի, ցոյցոյ: Դա ալ աշխարհաբարի հաւաքուղակ մեղքերէն է:

Սխալ խոնարհուող բայ մ'ալ հարցնումն է, և սխալը վերինին համանման է: Կը հարցունեմ, հարցոցի, հարցոցի, հարցոցի, կը զրնն առ հասարակ, որպէս թէ անցողական բայ մը լինէր:

Դորա ուղիղ խոնարհումն է.

Կը հարցնեմ, կը հարցնես, կը հարցնէ, (կը հարցանեմ-ին սղեղ ձեւը):

Կատարեալ ժամանակը — հարցայ, հարցար, հարցաւ, հարցանք, հարցաք, հարցան: Այս և ուղիղը, կարծը, և անոյշը, մէկ ց և մէկ վանկ նուա՞ք: Եթէ կենդանի լեզուէն

* Յարգելի բանասիրին հետ համակարծիք ենք կարծի ընտրելուն մէջ՝ երբ որ ուղիղ է այն: Քայց կը տարաձայնիք վերջաւորութեան մէջ. յիշեալ յանգը թէ հին և թէ նոր ընդհանուր լեզուի մէջ կրաւորական է՝ հարցայ և հարցուեցայ, և այլն. իսկ ներգործականը կը վերջանայ ի, հարցի և հարցոցի: Արդ, համառոտելու ժամանակ կ'առաջարկենք յարգ. բանասիրին ցուցած ձեւերը կրաւորաբար զործածել, և ներգործաբար ըսել՝ հարցի, հարցեր՝ կամ հարցի, հարցոց, հարցանք, հարցիք, հարցին, որ են համառոտութիւն աւամբերէնց, հարցուցի, ցի, ցոյց, հարցուցանք (չառ գա-

ապացոյց կամ նեցուկ կ'ուզէք այս ուղղագրութեան համար, կը յիշեցնեմ Ակնայ Հայերէնը, ուր ճիշդ այդպէս կը խոնարհեն այդ բայը — հարցայ, հարցար, և այլն:

Ուղիղ հրամայականները կը լինին — Հարցի, հարցէք:

Մ. Ս. ԳԱՐԻԲԵԼՅԱՆ

Նիա Երրորդ, 12 հոկտ. 1897.

ՊՐՈՖ. ՄԷՅԷԻ ՄԷԿ ԿՐԻՍՏԵԱՆ ՎՐԱՅ

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

ՊՐՈՖ. ՄԷՅԷԻ, (կը զրէ Պր. Կ. Յ. Բաւարական՝ Հաւարական Մարտի 1897 տարւոյն Յիսկուրդ էլին մէջ) խօսած է Արեւելագիտաց ԺԱ՝ Համաժողովին մէջ, ի միջի այլոց՝ յատենելով թէ « Ոմն չէ կարծուած ուսման (հմմտ. երեւմ, ուրեւմ), այլ արմատ է, ինչպէս կը ցուցնեն ոմանք, ոմանք, և այլն. իսկ ուրեւմ, ումեւմ հոլովներն՝ որոնք տեղի ստուած են այդ կարծեաց, շինուած են վերուածաբար իրիք և իմիք ձեւերն »:

Որպէս ալ որ յարգող ենք Պրոֆ. ՄԷՅԷԻ գիտնական հեղինակութիւնը, սակայն չենք կարող անտեսել որ յարգելի գիտնականին ոմնի արմատական լինելուն համար մէջ բեւրած ապացոյցն՝ ապացոյց չէ: Քանի որ Գմանք, ոմանք բառերն՝ ոմնի կանոնաւոր հոլովներն են, ի հարկէ ոմն ուղղական անոնց հոլովական արմատը կամ անփոփոխ մասն է. (տե՛ս ի քերականութիւն մն (մըմ) վերջացող բառերու հոլովման կանոնները.

առաջ մէջ այդպէս ուղղագրոյն կը գործածուի ա զերն ըստ հին լեզուի՝ հարցաք, և ոչ ի՞ հարցոցիք, ինչպէս և առաւել, առաւել և այլն), հարցոցիք, ցին:

Ի. Լ.

սերմն, սերմանք, սերմանց. — կողմն, կողմանք, կողմանց. — հիմն, հիմնանք, հիմնանց). բայց խնդիրն այստեղ այդ հոլովա- կան արմատոյն վրայ չէ, այլ ուն բառին ինքիբերն մէջ արմատական և կամ բաղա- դրեալ լինելուն վրայ է, որոյ մասին Պրոֆ. Մէյէի մէջ բերած ումանք, ումանց ձևերն իբր ապացոյց չեն կրնար ծառայել : Մենք կը համարձակինք Պրոֆ. Մէյէի կարծեաց բոլորովին հակառակ կարծիք յայտ- նել. այսինքն, նախ՝ ուն յիսուի բաղադրու- թիւն է ուման և երրորդ՝ ուրուում, ուրեմն հոլովներն ոչ սեղի տուած են ունի մասին այդ մեր ունեցած կարծեաց և եւ ալ վեր- լուծաբար շինուած են իրիչ և իւրիչ ձևերէն, որք բոլորովին տարբեր արմատէ կը ծագին : — Ահաւասիկ մեր պատճառներն :

Ա.

Նախ և առաջ ցուցակի մը մէջ դիտենք հայերենի հետեւեալ ձևերը.

Ո՛ւ ձայնէ կազմուած են. Ո, Ո՛ր, Ո՛վ, Ո՛ր, Ո՛ւն.

Ի ձայնէ կազմուած են. Ջի, Ինչ, Ջիւն, Ինքն, Իշ, Իք, Իմն :

Առաջնոց ամենուն արմատը ու լինելուն, բացի Ո՛ւն ձևէն, ապացոյցի կարօտութիւն չկայ, քանի որ ու պարզ արմատին վրայ աւելցներ են ր, վ, ք, պարզ տառերը, որք հետևաբար ուրիշ արմատէ չեն կարող յառաջ գալ. իսկ երկրորդներուն մէջէն ի պարզ ար- մատին վրայ աւելցուներ են նոյնպէս պարզ գ, ք, նչ տառերն և եղեր են զի, իք, ինչ, իսկ՝ զինչ բաղադրութիւն է գիտիմն, (տես Բազր. Զարգ. քեր. էջ 71) կամ՝ գտիմն : Ինքն կազմուած է ինք+ն, վերջինը ծանօթ ճ գիմորոշն է (հմմտ. աշխարհաբար ինքը, զինքը, ինքզինքը, ուր չ տառն հին նի պաշ- տօնը վարած է). ուստի կը մնայ ինք ձևն ալ՝ ի. գրին վրայ ճք պարզ տառից յաւե- չուածով և Գալով իշք ձևին՝ գիտենք որ սե- աական հոլով է՝ քերականութեանց մէջ ան- ուղղական նշանակուած, և որոյ. սեռական լինելուն արդէն ապացոյց է իւր ր տառն. արդ՝ եթէ այս ր տառը վերջներէն կը մնայ

իւ ձևն, զոր անշուշտ ի ուղղականին այլա- փոխութիւն մի պիտի համարենք. և այդպէս համարելով ալ՝ պիտի շտապինք, քանի որ մանաւանդ աշխարհաբարի մէջ այդ արմատը մնացեր է իւր նախկին ի պարզ ձևին մէջ առանց այլափոխութեան, հնչուելով և գրուե- լով իր, իրեն :

Կը մնայ ուրեմն ապացոյցանելով՝ որ մնա- ցած ուն և իմն ձևերն ալ յառաջ կու գան ու և ի արմատական տառերէն՝ յաւելմամբ մն տառից զուգադրութեան :

Արդ, նախնիք սովորութիւն բրած են ընդհանրապէս հոգիատար և շնչատար իրերը բացատրելու ու ձայնիւ, իսկ անշուշտ իրերը ի ձայնիւ¹. Ինչպէս կը ցուցնեն նաև ք յաւելուածով ոք և իք ձևերն, առաջինը մէկ մը, երկրորդը քան մը նշանակելով : — Ուստի, այդ վերոյիշեալ ու և ի տառից վրան մն տառից զուգադրութիւնն աւելցնելով, նախնիք ըրեր են ումն, իւմն, առաջինը (ոմն) շնչատար էակաց նշանակիչ, իսկ եր- կրորդը (իւմն) անշուշտ բաներու. զոր օրինակ հրեշտակ ոմն, այր ոմն, առիւծ ոմն, բայց ծով իմն, ծառ իմն, քաղաք իմն, և այլն : Մն յաւելուածն ըստ մեզ կրնայ մեկնուիլ իբր մի (թուական մէկ) և եւ գիմորոշ յօդի բաղադրութեամբ յառաջ եկած և ամփոփուած մին² ի մն, որ ու և ի՝ էութեան նշանա-

1. Օրինակք դի. « Ո՛ւ հովուեսդ Իօրայիւլի. Ո՛ւ պատառէ զնա՝ մահու ընդունի զպատու- հաս » . կամ իբր յարաբերական՝ « Ո՛ւ քառէ զմեզ » և. « Ո՛ւնն ի բարութենէ. Ո՛ւ արար զհեշտակս իւր » , և այլն : — Օրինակք և ձայ- նին. « Անշուս և անի գննութիւնք » . հիվէն և զիվէն, հիպէս և զիպէս, հիբար և զիբարգ- (Հմմտ. աշխարհաբարի մէջ իքը, ճիքը) : Այս ուղղական ի ձայնէն թէ յաւելմամբ շինուած կ'երևայ նաև իր (բան, արարուած) : Նոյնպէս ի արմատէ շինուած կ'երևայ նաև հիւմն (հիւմն), և այդ պատճառաւ չի կորսնցնէր կամ փոխե- լու ի գրել հոլովմանց մէջ :

2. « Հնուց կար մին (փոխառակ մի), որ հիմայ զառաւական է՝ նախադաս. Միև բարի խորհուրդ, որ կ'ըսուէր հին առավորէին մէջ յետագաս՝ Խորհուրդ մին բարի..... Այս մին

կիշ յօդերու վրայ դրուելով՝ կը ցուցնէ նոցա անհատականութիւնն. ինչպէս մարդ ձայնած ժամանակն իս մարդոց գաղափարը կը ներկայանայ մեր մտաց առջեւ, իսկ մարդ ոմն հնչած աստեղնիս՝ մարդոց իրականութիւնը կամ անհատականը կը հասկընաիք. այսպէս նաև ժառ՝ առանց յօդի կը յայտնէ ընդհանրաբար ժառի գաղափարը, իսկ ժառ իմն՝ մասնական ժառ անհատի իրականութիւնը, և այլն: (Հմմտ. Երեմիայի մէջ մը յօդն. աստիճ մը, մարդ մը, և այլն, թէ՛ շնչաւորի և թէ՛ անշնչի համար զործածուած իբր միակ յօդ):

Ք.

Ինչպէս վերը մէջ բերածներէն տեսնուեցաւ՝ ուրումն և ուսման հոյովները չեն պատճառ, ինչպէս կը կարծէ Պրոֆ. Մէյէ, որով մենք ոմն (ո-մն) բաղադրեալ կը համարինք. քանի որ մանաւանդ այդ հոյովներն նոյն իսկ ո-մնի կանոնաւոր կերպով կազմուած սեռական և տրական հոյովներն են: Եւ իրարի, պարզ ոչ սեռականի է ոյր և տրականն է ում, որոնց վրայ աւելցուած է մն զուգադրութիւնն: Եւ որովհետեւ ոյր և ում բաղաձայն տառերով վերջաւորուած են, ուստի աւ և Ե բառակապ ձայնաւորներով մնի հետ միացած եղած են ոյր-ու-մն, ում-Ե-մն. և ըստ կանոնի ձայնաւորաց փոփոխման՝ ոյր վանկին վրայ յաւելուած վանկ զայլով՝ ոյր-ու-մն ձևն եղած է ուր-ու-մն. (Հմմտ. լոյս, լուսոյ, կոյր, կոյրի. բոյր, բուրումն, և այլն): — Ըստ այսմ կերպի կազմուած են նաև նրբ-Ե-մն, ուր-Ե-մն, ուստ-Ե-մն, ուր-Ե-ք, ուստ-Ե-ք, նրբ-Ե-ք (Հմմտ. ի-մն, ի-ք, ո-մն, ո-ք):

Ուրեմն, ինչպէս ըսածնէս տեսնուեցաւ,

բառն աստեղ մը ամփոփուած եղած էր մն, միշտ յետադառ, այսպէս. Սակաւմն քացախ. ամ. ամնմն ժամանակաւոր.... Ընտանքերէն յայտնի կը տեսնուի որ հիմակուան մըն (հնչ. միև և մն) յօդը՝ դրբ. ի-մնէն յառաջ եկած չէ ու (Այստեղեան. քննակ, քեր. Մասն Բ. էջ 25):

ուրումն և ուսման ձևերն վերլուծաբար չի նուած չեն իրիք և իմիք ձևերէն: Իսկ այս վերջիններս ուրիշ բան չեն, բայց եթէ իք ձևին օրինաւոր կերպով շինուած սեռական և տրական հոյովներն. ըստ հայկական լեզուի թ լինելով նշանակիչ սեռականի (Հմմտ. անձին կարօտելոյր, մարդոյր, ճիւղոյր, սեռոյր, Սովորատոյր. նաև զբանուանքն ոյր, էր, ուրումն, ուրուք, նորա, այնր, սորիմ), և մ նշանակիչ տրականի (Հմմտ. մարդոմ, սրբոմ, նորոմ, հնոմ, առաջնոմ, միտմ, քոմ, էրոմ, ում, ուսման, ումնք, նմա, այնմ, սմիմ). որով եղբեր են սեռ. իր, տրակ. իմ, որոնք ի բառակապ ձայնաւորով միացեր են ուղղականին քին հետ, լինելով իր-ի-ք, իմ-ի-ք. իսկ բացառականին մէջ վանկ մ'աւելնալուն պատճառաւ՝ յիմնքէ (փխնկ. յիմիքէ):

Բանասէր

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳԻՐ

ՄԱՆ ԹԱՇ Ե ԱՆ ԱՂ Ե ԲԾԱՆ ԴՐԻ

 ԲԻՅՈՑՈՍ՝ քարիւղի վաճառականաց մէջէն ամենէն մեծը և ամենէն նշանաւորը Մանթաշօք կամ Մանթաշեանց հոշականուն առաջայն է: Ի Գահիրէ, ի Բորդ-Սայիտ, ի Տա, միէդ և յԱղեքաանգրիա ունի իւր յատուկ տուններն ու գործակատարները, որոնք՝ բաց ի Բորդ-Սայիտի գործակատարէն՝ որ յոյն է, առ հասարակ ամենը հայազգի են. նմա, նապէս երկրորդական պաշտօնեայք՝ եթէ ոչ առ հասարակ՝ զոնեայ մեծաւ մասամբ հայազգի են. վասն զի Մանթաշեանցին սկզբունքն է նախ իւր ազգայնոց օգնել:

Բայց թէ ով ոք է Մանթաշեանց Աղեք-